ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/02

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Զաքարյանի (պետական գրանցման համար՝ 271.110.912925),

քննելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ. ներկայացված (03.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սենտրալ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.12.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

« 1. Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, մասնավորապես արձանագրվել է հետևյալը՝ Հավելված 1.1 բացակայում է Հավելված 1-ով նշված չափաբաժինների առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փատաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը 28.12.2021թ. շարունակելով նիստը, որոշեց՝ «Սենտրալ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, սակայն 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Արդյունքում՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ինչպես արդեն նշել ենք, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, մասնավորապես արձանագրվել է հետևյալը՝ Հավելված 1.1 բացակայում է Հավելված 1-ով նշված չափաբաժինների առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փատաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով մեկ աշխատանքային օրով կասեցվել է նիստը և հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

«Սենտրալ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն՝ գնահատող հանձնաժողովը 28.12.2021թ. շարունակելով նիստը արձանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, սակայն 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Արդյունքում՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

Տվյալ պարագայում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելով՝ խախտել է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են և ուղարկվել գնահատող հանձնաժողովի համապատասխան էլ. հասցեին, սակայն՝ անհասկանալի և չհիմնավորված կերպով ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «Սենտրալ» ՍՊԸ -ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.01.2022թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 05.01.2022թ. թիվ Ե/40/20-22 գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Սենտրալ» ՍՊԸ-ի բողոքի քննության նպատակով ներկայացնում եմ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գրավոր դիրքորոշումը:

Առանցքակալների ձեռքբերման նպատակով 2021թ. դեկտեմբերի 13-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի

հայտերի բացման օր (հայտերի ներկայացման վերջնաժամկետ) է սահմանվել 2021թ. դեկտեմբերի 21-ը:

2021թ. դեկտեմբերի 16-ին ստացվել է պարզաբանման հարցում, որով մասնակիցը խնդրել է պարզաբանել՝ արդյոք իր կողմից ներկայացվող առանցքակալները (ներկայացրել է աղյուսակով) ընդունելի կլինեն գնահատող հանձնաժողովի կողմից, քանի որ մրցույթի հրավերով պահանջվող բոլոր չափաբաժիններում ներառված առանցքակալների տեխնիկական բնութագրերում նշված են միայն առանցքակալների համարները, սակայն արտադրող գործարանը բացի համարներից մակնշում է նաև տառերը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի հանձնարարությամբ 2021թ. դեկտեմբերի 17-ին հրավիրված արտահերթ նիստի ժամանակ հանձնաժողովի անդամներին ներկայացվել է մասնակցից ստացված գրության բովանդակությունը, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից նշվել է, որ առանցքակալները ներկայացվել են գծագրերի տվյալներով և տվյալների որևէ փոփոխություն հնարավոր չէ կատարել:

Հայտերի բացման նիստի ժամանակ պարզվել է, որ ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն, «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն և «Սվետան» ՍՊԸ-ն:

Հայտերի գնահատման նիստում մասնակիցների՝ հայտերի գնահատման արդյունքում պարզվել է, որ բոլոր մասնակիցների հայտերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի ընթացակարգը կասեցվել է և մասնակիցներին ծանուցվել է առկա անհամապատասխանությունների մասին:

Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են հայտերի շտկված տարբերակները:

Հայտերի գնահատման նիստին մասնակցել են նաև «Սենտրալ» ՍՊԸ-ի տնօրեն Արեն Քաքարյանը և «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Վահագն Մկրտչյանը:

Գնահատող հանձնաժողովը «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի և «Սվետան» ՍՊԸ-ի հայտերը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխան՝ «բավարար», իսկ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը թիվ 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժիններով գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ «անբավարար»: Անհամապատասխանությունների մասին գնահատող հանձնաժողովը մանրամասն ներկայացրել է տնօրեն Արեն Զաքարյանին, որից հետո «Սենտրալ» ՍՊԸ-ի տնօրեն Արեն Զաքարյանը հայտարարել է այն մասին, որ ինքը պատրաստ է ներկայացնելու հիմնավորող փաստաթուղթ՝ իր կողմից

ներկայացրած թիվ 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժիններով առանցքակալների հրավերի պահանջների համապատասխանության մասին:

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից նույն օրը համակարգող քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է երաշխիքային նամակ N-28/12 ARM տրված 2021թ. դեկտեմբերի 28-ին, որը գնահատվող հանձնաժողովի կողմից դիտարկվել է, սակայն չի՝ ընդունվել որպես հիմնավորող փաստաթուղթ:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ նիստի ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից բազմակի հնչել է, որ նշված առանցքակալները ատոմակայանում օգտագործվող առաջնային կարգի ապրանքներ են, հաճախակի ստուգման ենթակա են համաշխարհային ատոմային վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից և նախագծային շեղումներ թույլատրելի չեն:

Բողոքի պահանջը, գտնում եմ անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից կատարված գործողությունները բացառապես հիմնված են ՀՀ Գնումների օրենսդրության և իրավական այլ ակտերի վրա»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.01.2022թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21-28.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1 բացակայում է Հավելված 1-ով նշված չափաբաժինների առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15, 18-21-րդ չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15. 18-21-րդ չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

5. «Սենտրալ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ գնահատող հանձնաժողովի կողմից անհասկանալի և չհիմնավորված կերպով Ընկերության հայտը մերժվել է, այն պայմաններում, երբ արձանագրված անհամապատասխանությունները «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից շտկվել և ուղարկվել են գնահատող հանձնաժողովի համապատասխան էլ. հասցեին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սենտրալ» ՍՊԸ-ի 30.12.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 05.01.2022թ. թիվ Ε/40/20-22 գրությունը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին...:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքեր:

Այսպես՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21-28.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1 բացակայում է Հավելված 1-ով նշված չափաբաժինների առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15. 18-21-րդ չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը Ընթացակարգի 1-7, 9, 11-12, 15. 18-21-րդ չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

«Սենտրալ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է այն փաստը, որ գնահատող հանձնաժողովի կողմից անհասկանալի և չհիմնավորված կերպով Ընկերության հայտը մերժվել է, այն պայմաններում, երբ արձանագրված անհամապատասխանությունները

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից շտկվել և ուղարկվել են գնահատող հանձնաժողովի համապատասխան էլ. հասցեին:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.12-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերը բացվելուց և գնահատվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ***Ընդ որում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:***

Վերոգրյալ իրավական կարգավորումների մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.12-րդ ենթակետով սահմանված իմպերատիվ դրույթը, այն է՝ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***, մինչդեռ՝ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 21-28.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը՝ Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու մասով, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Ընկերության հայտը մերժվել է, սակայն մանրամասն չեն նկարագրվել արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտի մերժման հիմքերը, միայն արձանագրվել է, որ Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը Ընթացակարգի 1-7-րդ, 9-րդ, 11-12-րդ, 15-րդ և 18-21-րդ չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, Ընթացակարգի 1-7-րդ, 9-րդ, 11-12-րդ, 15-րդ և 18-21-րդ չափաբաժինների մասով առանցքակալների ձեռքբերման համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	**Անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**
1	**Առանցքակալ**	№ 8222 (51222) ԳOUS 7872 կամ համարժեքը:
2	**Առանցքակալ**	№ 8226 ԳOUS 7872 կամ համարժեքը:
3	**Առանցքակալ**	№ 3518 ԳOUS 5721 կամ համարժեքը:
4	**Առանցքակալ**	№ 7203 ԳOUS 333 կամ համարժեքը:
5	**Առանցքակալ**	№ 8106 ԳOUS 6874 կամ համարժեքը:
6	**Առանցքակալ**	№ 32211 ԳOUS 8328 կամ համարժեքը:
7	**Առանցքակալ**	№ 46212 ԳOUS 831 կամ համարժեքը:
9	**Առանցքակալ**	№ 3516 ԳOUS 5721 կամ համարժեքը:
11	**Առանցքակալ**	2316 ԳOUS 8328-75 կամ համարժեքը:
12	**Առանցքակալ**	2320 ԳOUS 8328-75 կամ համարժեքը:
15	**Առանցքակալ**	6216ZZ կամ համարժեքը:
18	**Առանցքակալ**	FAG6026C3 կամ համարժեքը:
19	**Առանցքակալ**	FAGNU1026-XL-M1-C3 կամ համարժեքը:
20	**Առանցքակալ**	3622 ԳOUS 5721 կամ համարժեքը:
21	**Առանցքակալ**	3608 ԳOUS 5721 կամ համարժեքը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, Ընթացակարգի 1-7-րդ, 9-րդ, 11-12-րդ, 15-րդ և 18-21-րդ չափաբաժինների մասով ներկայացվել է հետևյալ ձևով՝

Չափաբաժնի համար	**տեխնիկական բնութագիրը**
1	Առանցքակալ № 8222 Гост 520-2011
2	Առանցքակալ № 8226 Гост 520-2011
3	Առանցքակալ № 3518 Гост 520-2011
4	Առանցքակալ № 7203 Гост 520-2011
5	Առանցքակալ № 8106 Гост 520-2011
6	Առանցքակալ № 32211 КМ Гост 520-2011
7	Առանցքակալ № 46212 Гост 520-2011
9	Առանցքակալ № 3516 Н Гост 520-2011
11	Առանցքակալ № 2316 КМ Гост 520-2011
12	Առանցքակալ № 2320 КМ Гост 520-2011
15	Առանցքակալ № 80216 Гост 520-2011
18	Առանցքակալ № 126 А Гост 520-2011
19	Առանցքակալ № 32216 Гост 520-2011
20	Առանցքակալ № 3622 Н Гост 520-2011
21	Առանցքակալ № 3608 Гост 520-2011

Այսպիսով՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերը 1-7, 9, 11-12, 15, 18-21-րդ չափաբաժինների մասով համադրելով Ընկերության կողմից ներկայացված Հավելված N 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով միևնույն չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերի հետ, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից Տեխնիկական բնութագրերով ներկայացված առանցքակալների ԳՕՍՏ-երի համարները տարբերվում են Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերով նշված առանցքակալների ԳՕՍՏ-երի համարներից, բայց միևնույն ժամանակ հարկ եմ համարում

արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերով սահմանվել են ԳՕՍ-երը և նշվել է «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով՝ վերոգրյալով պայմանավորված՝ ենթադրվում է, որ Ընկերության կողմից Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագրերի հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ներկայացված լինելը վերաբերում է ԳՕՍ-երին, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտի մերժման վերաբերյալ որևէ հիմք չի նշվել, որը հնարավորություն կտար գնահատելու թե Ընկերության կողմից ներկայացրած ԳՕՍ-երի համարժեքությունը ստուգելիս Պատվիրատուն ինչ պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալների և փաստերի վրա է հիմնվել:

Ընդ որում՝ Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21-28.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունից պարզ է դառնում, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի իրացրել Կարգի 67-րդ կետով իրեն վերապահված իրավունքը, մինչդեռ տվյալ դեպքում գտնում եմ, որ պետք է կիրառվի՝ հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումները:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**